ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արարատ 1-ն ՄՄԱՌՎ-ԷԱՃԱՊՁԲ-2026/89 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Արարատ-1 ՍՊԸ	գլխարկներ	գլխարկներ	Արարատ-1 ՍՊԸ	գլխարկներ Ձմեռային կեպին պետք է բաղկացած լինի կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից, հատակից և ականջակալներով ծոծրակամասից: Կեպիի երեսացուն պետք է պատրաստված լինի կոստյումի համար օգտագործվող նույն գործվածքից: Աջ ականջակալին պետք է կարված լինի 8 սմ երկարությամբ տիսմայե ժապավեն, որի վրա ամրացված լինեն 2 հատ մետաղական կոճգամի մտնող մասեր: Դրանցից առաջինը պետք է տեղադրված լինի ականջակալի եզրակարից դեպի

						ներս՝ 2 սմ, իսկ երկրորդը՝ 3-4 սմ հեռավորության վրա: Ձախ ականջակալի վրա՝ եզրից դեպի ներս 2 սմ հեռավորության վրա, պետք է ամրացված լինի 1 հատ մետաղական կոճգամի ամրացվող մասը: Գլխարկահատակի կենտրոնական մասում՝ ներսից, պետք է առկա լինի շեղանկյուն դրոշմ, որի վրա նշված լինեն՝ գլխարկի չափսը, արտադրման տարեթիվը, արտադրող կազմակերպության անվանումը: Ականջակալներով ձմեռային կեպիի մորթյա հատվածը պետք է պատրաստված լինի մուգ մոխրագույն արհեստական մորթուց՝ առնվազն 890 գ/մ² մակերեսային խտությամբ և 9-10 մմ մորթախավի բարձրությամբ: Ականջակալ-ծոծրակամասի մորթին պետք է մշակված լինի զարդակարով՝ եզրերից 5-7 մմ հեռավորության վրա: Կեպիի ներսամասը պետք է մգդակված լինի աստառացու կտորով՝ 5-6 սմ կողմերով քառակուսաձև մգդակմամբ: Ներքին տաքացնող ներդիրը պետք է պատրաստված լինի առնվազն 100

						գ/մ² խտությամբ սինտեպոնից: Հովհարի ներսում պետք է տեղադրված լինի 2-3 մմ հաստությամբ պլաստմասե միջադիր: Հովհարի եզրից դեպի ներս՝ 1 սմ խորությամբ, պետք է մշակված լինի զարդակար: Գլխարկաբոլորքի բարձրությունը՝ սկսած 54 չափսից, պետք է լինի 8.8 սմ: Յուրաքանչյուր հաջորդ չափսի դեպքում բարձրությունը պետք է ավելանա 2 մմ-ով: Ծոծրակամասի բարձրությունը՝ սկսած 54 չափսից, պետք է լինի 8.2 սմ: Յուրաքանչյուր հաջորդ չափսի դեպքում բարձրությունը պետք է ավելանա 2 մմ-ով: Ականջակալների եզրերը պետք է կիպ ամրացված լինեն գլխարկահատակին: Կեպիի հովհարը պետք է լինի կլորավուն՝ կիսալուսնաձև, 1.8-2.3 մմ հաստությամբ և կենտրոնական հատվածում՝ 6.0-6.5 սմ լայնությամբ: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական հատվածում պետք է ամրացված լինի ալյումինե համաձուլվածքից պատրաստված գլխարկանշան՝ ըստ Գնորդի կողմից ներկայացվող նմուշի: Չափսեր

					Մատակարարման ենթակա կեպիների չափսերը կտրամադրվի Գնորդի կողմից: Մատակարարը պարտավոր է ապրանքները մատակարարել Գնորդի կողմից ներկայացված չափսային բաշխմանը համապատասխան: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց արտադրական թերությունների: Մատակարարվող ապրանքի արտաքին տեսքը, ձևը, դետալների տեղադրությունը և գլխարկանշանը պետք է համապատասխանեն Գնորդի կողմից ներկայացվող և համաձայնեցվող նմուշին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Арарат 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՄՄԱՌՎ-ԷԱՃԱՊՁԲ-2026/89 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					